02.08.2016թ. կնքված **N ԲԸԱՇՁԲ-ՀՎԿԱԿ-2016-01**
պայմանագրում փոփոխություններ կատարելու վերաբերյալ
համաձայնագիր N3

ք. Երևան «22» օգոստոսի 2018թ.

«Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ը, ի դեմս գլխավոր տնօրեն՝ Արտավազդ Վանյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Գագշին Քոմփանի» ՍՊ ընկերությունը, ի դեմս ընկերության տնօրեն Գագիկ Գրիգորյանի (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից, հիմք ընդունելով «ԲԸԱՇՁԲ-ՀՎԿԱԿ-2016-01» պայմանագրով նախատեսված ծավալներով 5.1 կետով սահմանված միջոցների հատկացումը և ՀՀ Կառավարության 10.03.2011 թ. 3-ի 168-Ն Որոշման 60-րդ կետի 2-րդ ենթակետը կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

Հետագա համագործակցության համար, հիմք ընդունելով Կապալառուի, շինարարական աշխատանքների նկատմամբ որակի տեխնիկական և հեղինային հսկողությունը իրականացնող ընկերությունների կողմից ներկայացված համատեղ ակտը, կողմերը որոշեցին.

1.1 Հիմք ընդունելով Կապալառուի, հաստատել սույն համաձայնագրի N1 Հավելվածով սահմանված փոփոխությունները, 2016թ. օգոստոսի 02-ի «ԲԸԱՇՁԲ-ՀՎԿԱԿ-2016-01» պայմանագրի փոփոխված ծավալաթերթը, որով.

1.1.1 նախատեսել ֆինանսական միջոցներ 17,650.0 (տասնյոթ հազար վեց հարյուր հիսուն) ՀՀ դրամ ծավալով, որից 2,940.0 (երկու հազար ինը հարյուր քառասուն) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն,

1.1.2 նախահաշվում կատարել չնախատեսված աշխատանքների ավելացում 2,234,537.0 (երկու միլիոն երկու հարյուր երեսունչորս հազար հինգ հարյուր երեսունյոթ) ՀՀ դրամ ծավալով, որից 372,420.0 (երեք հարյուր յոթանասուներկու հազար չորս հարյուր քսան) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն, որոնց համար նախատեսել ֆինանսական միջոցներ:

1.2 Հաստատել սույն պայմանագրի N1 Հավելվածով սահմանված փոփոխված աշխատանքների օրացուցային գրաֆիկ ըստ հավելված N2-ի:

1.3 Հաստատել սույն համաձայնագրի 1.1 կետում սահմանվող 2016թ. օգոստոսի 02-ին կնքված № ԲԸԱՇՁԲ-ՀՎԿԱԿ-2016-01 պայմանագրի ծավալների մասով վճարման ժամանակացույցը ըստ հավելված 3-ի:

1.4 Սույն համաձայնագիրը համարվում է 2016թ. օգոստոսի 02-ին կնքված № ԲԸԱՇՁԲ-ՀՎԿԱԿ-2016-01 գնման պայմանագրի անբաժանելի մաս:

1.5 Սույն համաձայնագրի պայմանները կիրառվում են 2016թ. օգոստոսի 02-ին կնքված № ԲԸԱՇՁԲ-ՀՎԿԱԿ-2016-01 գնման պայմանագիրը կնքելուց հետո մինչև սույն համաձայնագիրը կնքելը կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների վրա:

1.6 Սույն համաձայնագրում չնշված կողմերի գնման պայմանագրով նախատեսված մյուս կետերը մնում են անփոփոխ:

1.7 Սույն համաձայնագիրը կազմված է 24 էջից, որից 1-ին էջը սույն համաձայնագիր N3-ն է, 2-22 էջերը՝ Հավելված 1-ը, 23-րդ էջը՝ Հավելված 2-ը և 24-րդ էջը՝ Հավելված 3-ը:

1.8 Սույն համաձայնագիրը կազմված է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկ օրինակ:

2. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ	«Գագշին Քոմփանի» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, 0025, Մ. Հերացի 12	Հասցե՝ ՀՀ, Խաղախ Դոնի 31/44
Բանկ՝ «Արդշինբանկ» ՓԲԸ Արաբկիր մ/ճ	Բանկ՝ «Ամերիբանկ» ՓԲԸ «Արշակունյաց» մ/ճ
Հ/Հ 2471201669930000	h/h 1570011642820100
ՀՎՀՀ 02625503	ՀՎՀՀ 00451322
Գլխավոր տնօրեն՝ Արտավազդ Վանյան	Տնօրեն՝ Գագիկ Գրիգորյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ